Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3-93
Б-72

523

524
525

83υ
С-72

14
221

14

№ 4517
Армянская книга

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿ. ՀԱՅ. ԳՐՔ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

№ 12

# ԳԱՌՆՈՒԿ
ԵՒ
# ԼՈՒՍԱՏՏՆԻԿ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՇՄԻԴՏԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՆՈՒԱՐԴ

2004



ԹԻՖԼԻԶ
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՕՐԲԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1882

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿ. ՀԱՅ. ԳՐՔ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

# ԳԱՌՆՈՒԿ
## ԵՒ
# ԼՈՒՍԱՏՏՆԻԿ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՇՄԻԴՏԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՆՈՒԱՐԴ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ԹԵՐԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5

1882

Дозволено Цензурою. Тифлисъ, 28 Января 1882 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул. 5

# ԳԱՌՆՈՒԿ

## ԳԼՈՒԽ I.

### ԲՐԻՍՏԻՆԷՆ ԵՒ ՆՈՐԱ ՄԱՅՐԸ

Մի խեղճ, տաս տարեկան աղջիկ Քրիստինէ անունով գնաց անտառը ելակ քաղելու: Մի շոգ օր էր և այնպէս խաղաղ՝ որ ինչպէս կ'ասեն, տերեւն անգամ չէր շարժւում: Աղջիկը շատ էր շոգում և սաստիկ կարմրել էր: Բայց չը նայելով դորան նա եռանդով աշխատում էր, որովհետև նա գիտէր որ ելակների փոխարէն ստանալի փողերը հարկաւոր կը լինէին իւր հիւանդ մօր զանազան պիտոյքների համար:

Երեկոյեան դէմ մի ամբողջ սակառ ելակով լցրած ու ձեռքն առած նա գնում էր տուն: Մէկ էլ յանկարծ անձրևը բռնեց, որ քանի գնում սաստկանում էր, վերջապէս խառնեցաւ որոտումն ու քիչ էլ յետոյ մի սոսկալի փոթորիկ բարձրացաւ: Աղջիկն արդէն մօտեցել էր անտառի ելքին, բայց փոթորիկն ենթարկուելով նա շտապեց ապաստանարան գտնել խիտ թփերի տակ:

Յանկարծ մօտիկ թաւ անտառում նա մի ողբա-գին ձայն լսեց որ նման էր երեխայի ձայնի։ Ոչ յոր-դահոս անձրևը, ոչ փայլող կայծակը, ոչ որոտումն չէին կարող խանգարել բարի գթասիրտ Քրիստինէին, նա վազեց դէպի այն կողմը, որտեղից լսվում էր հա-ռաչանքը, և զարմանալով տեսաւ մի նորածին գառ-նուկ, որ թաջուել դողում էր ցրտից, կորցրել էր իր մօրը և չէր կարողանում իրան համար պատսպարան գտնել։

—Խեղճ կենդանի, ասաց Քրիստինէն, չէ, ես չեմ թողնիլ որ դու կորչես։ Արի ինձ հետ, գնանք մեր խրճիթը։

Եւ գառանը գիրկն առնելով՝ աշխատում էր տա-քացնել նորան, իսկ երբ անձրևը դադարեց՝ տարաւ նորան իրանց տուն։

—Մայրիկ, մայրիկ, կանչեց նա մտնելով մի փոք-րիկ բայց մաքուր սենեակ, ուր պառկած էր նորա մայրը, մի տես ինչ եմ գտել։ Ինչ սիրունիկ գառնուկ։ Կա՛ց ես ինչքան եմ սիրելու դորան։

—Աղջիկս, պատասխանեց մայրը, բարձրանալով անկողնից և կռթնելով ձեռքի վերայ, տանեն ուրա-խութիւնը քեզ մոռանալ է տալ, որ այդ գառնուկն անշուշտ մի տէր կ՚ունենայ, որ դա կորած է և մենք պարտաւոր ենք դորան դարձնել իր տիրոջը։ Ես հա-ւատի եմ, որ դա պատկանում կը լինի մեր գիւղի հարուստ կալուածատիրոջ։ Հէնց այսօրևեթ դու տար դորան, ուրիշի ապրանքը մենք չը պէտք է պահենք մեր տանը և ոչ մի գիշեր։ Մենք աղքատ ենք, բայց պէտք է ազնիւ լինենք։

—Ուրեմն դուք խելք չ՚ունիք, ասաց մի կոպիտ



ձայն պատասխանից. միթէ կարելի է այդքան դիւրա-զգաց լինել։

Այդ խօսքերն ասող մարդը մի քարտաշ էր, նա նորոգում էր այդտեղի պատը և լսել էր մօր ու աղջ-կայ խօսակցութիւնը։ Երկուսը վախենալով նայեցան նորան, իսկ նա շարունակեց առաջուայ ձևով։

—Այդպէս մի նայէք ինձ վերայ, ես հօ ձեզ չար չեմ կամենում։ Դուք ինձ լսեցէք, արէք մենք մոր-թենք այդ գառանը և բաժին անենք—երկու խորովա-ծացու դուրս կը գայ, կաշին էլ քիչ քիչ էլ մի տաս-ներկու զլլէր գրոշ հօ կ՚արժենայ։ Կալուածատէրը շատ հարուստ է. նա հարիւրից աւել ոչխարներ ունի, մի գառը եղած թէ չ՚եղած, նորա համար միևնոյն է։ Ուրեմն ուտենք առանց այլևայլութեան։ Մի վախե-նաք, մեզ ոչոք չի տեսել և չի տեսնի, իսկ ինձ վե-րայ դուք կարող էք վստահ լինել։

Քրիստինէն սարսափեցաւ։ Դեռ միայն գառանը պահելու միտքն էլ նորան յանցանք էր թվում։

—Դուք շատ վատ խորհուրդ էք տալիս, ասաց նա քարտաշին, այն՝ ինչ որ մարդիկ չեն տեսնում, Աստուած տեսնում է։ Իսկ դու, մայրիկ, դու շատ ճըշ-մարիտ ես ասում, և ես զարմանում եմ թէ ինչպէս առաջ ես չը մտածեցի։ Ի հարկէ ես կը ցանկանայի ինձ մօտ պահել գառանը, նա շատ սիրուն է, շարու-նակեց աղջիկն արտասուքը աչքերին, բայց ամենից առաջ պէտք է հետևել Աստուծոյ պատուէրներին։

Եւ գառանը փաթաթելով գոգնոցի մէջ, Քրիս-տինէն վազեց դէպի կալուածքը թէև անձրևը դեռ չէր դադարել։

Երբ որ աղջիկը հասաւ դղեակը, շէնքի վերայ նոր-

տած էր կալուածատիրոջ կինը երեխաներով շրջապա-տուած, նոքա բոլորը նայում էին ծիածանին և զուար-ճանում:

Քրիստինէն գոգնոցից հանեց գաւաթը, դրեց գետնին ու պատմեց թէ ինչպէս էր գտել նորան ան-տառում:

—Ինչ հարկ կար այսպէս ուշ ժամանակ և այս-պիսի վատ եղանակին բերելու, ասաց կալուածատիրոջ կինը: Ճշմարիտ դու մի բարի և սիրելի աղջիկ ես:

—Այո, շատ բարի աղջիկ, աւելացրեց տան տէրը, որ նոյն րոպէին դուրս եկաւ տանից: Դուք էլ այս մանուկի պէս եղէք զաւակներս, աւելի լաւ է ոչ մի գառը չունենալ և ազնիւ լինել, քան թէ ամբողջ մի հօտ ունենալ հարիւր ոչխարից ու անազնիւ լինել: Լաւութիւն անելու այն պատրաստակամութիւնը՝ որով այս աղջիկը բերեց ինձ գաւաթը, սրտի գանձ է, այն-պիսի մի գանձ՝ որ մի ամբողջ հօտից աւելի արժէ. այդ գոյքը չեն կարող ուտել գայլերը և ոչ մի թշնա-մի էլ չի կարող խլել:

Ֆրանցիսկոսը՝ կալուածատիրոջ որդիներից մէկը, վազեց գոմը և մի ոչխար դուրս բերեց: Գառն իսկոյն ճանաչեց իւր մօրը և ուրախ ուրախ մայելով, թռչկո-տելով վազեց նորա մօտ:

—Որքան բաղդաւոր է նա, բացականչեց Քրիստի-նէն: Միմիայն այս տեսնելն արդէն վարձատրում է ինձ, որ բերի նորան: Խոստովանում եմ, երբ որ ես նո-րան գտայ անտառում առաջին րոպէներում ես չա-փազանց ցանկանում էի նորան ինձ մօտ պահել:

—Լաւ, սիրելիս, ասաց կալուածատէրը, որովհե-տև դու բարի աղջիկ ես և գառը քեզ դուր է գալիս՝



ես ընծայում եմ նորան քեզ: Միայն մի բան կայ. նա դեռ մօր կաթն է ծծում, և եթէ նորան ծծից կտրեն նա կը մեռնի շուտով: Թող նա մնայ մեզ մօտ մի եր-կու շաբաթուայ ժամանակ. նա կը մեծանայ, կը կազ-դուրուի, և Ֆրանցիսկոսը նորան քեզ կը բերի:

—Իսկ այնուհետև արդէն քեզ համար հեշտ կը լինի նորան կերակրել, աւելացրեց կալուածատիրոջ կինը: Նա կարածի քեզ մօտ, երբ դու ելակ կը քաղես կամ գործելով կը պարապես, և մինչև ամառուան վերջը դու կարող կը լինես բաւականին խոտ հաւաքել և չորցնել ձմեռը նորան կերակրելու համար: Մէկ էլ որ, աղջիկս, դա էգ է, իսկ էգ ոչխարները կաթն և բուրդ են տալիս, կաթը օգտակար կը լինի քեզ և քո մօրը, իսկ բրդից դուք կարող էք տարին մի քանի զոյգ գուլ-պայ գործել:

—Եւ վերջապէս, նկատեց Ֆրանցիսկոսը. ոչխար-ները ծնում են ու մի քանի տարուց յետոյ դուք կա-րող էք նոցա բաւականին բազմացնել:

Քրիստինէին ընթրիքի հրաւիրեցին: Բացի դորա-նից կալուածատիրոջ կինը նորան տաս հատ թարմ ձուաներ և մի մեծ կտոր լաւ կարագ բաշխեց, խա-ղողի տերևների մէջ փաթաթած:

—Զաւակս, ասաց նա ձուաները մէկ մէկ տեղա-ւորելով աղջկայ գոգնոցի մէջ, այս տար մօրդ. ինձա-նից բարև արա, և ասա, ես ցանկանում եմ՝ որ Աս-տուած նորան շուտով առողջութիւն տայ:

Քրիստինէն ուրախ ուրախ վազեց տուն ծաղկալից մարգերի միջով: Անձրևը դադարել էր և թարմ օդը լցուած էր անուշահոտ բուրմունքներով:

Գալով մօր մօտ նա բոլորը կարգով պատմեց նորան:

—Այդ բոլորը, սիրելիս, հաստատում են իմ ասածները մաքուր խղճի մասին, պատասխանեց մայրը: Գրիստինէ, ականջ դիր միշտ խղճիդ ձայնին՝ և միշտ բաղդաւոր կը լինես: Մենք աղքատ ենք, բայց հոգեկան հանգստութիւնը մեր հարստութիւնն է:

Գրիստինէն համարում էր օրերը և անհամբերութեամբ սպասում էր իր գառնուկին: Վերջապէս երկու շաբաթն անցաւ, իսկ Ֆրանցիսկոսը չէր երևում և խեղճ աղջիկը սկսեց յոյսը կորցնել:

Մի անգամ էլ իր մօր անկողնի մօտ նստած՝ տխրութեամբ ասաց նա.

—Չէ, էլ ես չեմ տեսնիլ իմ գառանը:

—Համբերութիւն ունեցիր, պատասխանեց մայրը, կարելի է Ֆրանցիսկոսը ժամանակ չ'ունի կալուածքից հեռանալու:

Բայց այդ րոպէին դուռը բացուեցաւ և ներս մտաւ կալուածատիրոջ որդին, գառն էլ նորա հետ. տղան բերել էր նաև մի սակառով լիքը կանաչ խոտ:

Գրիստինէն վազեց գառան մօտ, չոքեց նորա առաջ և սկսեց փաղաքշել նորան:

—Ահ, ինչ մեծացել է և ինչ սիրուն է: Ես հազիւ ճանաչեցի նորան, ասում էր աղջիկը: Եւ ինչպէս գանգուր է նորա բուրդը: Ոհ, հիմա որ ես բոլորովին բաղդաւոր եմ:

—Ես արդէն վաղուց էի կամենում բերել դորան քեզ մօտ, ասաց Ֆրանցիսկոսը. բայց հայրս միշտ խորհուրդ էր տալիս յետաձգել, որ նա կազդուրուի:

—Ահ, դու էլ, քո ծնողներն էլ շատ բարի էք,



ասաց Գրիստինէն: Եթէ ես այսպէս աղքատ չը լինէի, եթէ ես էլ իմ կողմից կարողանայի մի բանով փոխարէնը հատուցանել.... բայց կաց, ես քեզ համար մի զոյգ գուլպայ կը գործեմ դորա առաջին բրդից: Դու կը տեսնես, որ իմ տուած խօսքը կատարել գիտեմ:

Ֆրանցիսկոսը գնաց, իսկ Գրիստինէն գառանը տարաւ գոմը, որ խրճիթին կից էր և խոտ տուեց նորան: Մի առ ժամանակից յետոյ գառնուկն այնպէս ընտելացաւ նորան, որ նորա ձեռքից խոտ էր ուտում, նորա գաւաթից կաթն էր խմում և հետևում էր նորան ինչպէս մի շնիկ: Առաջին կանչելուն պէս գառնուկն իսկոյն գալիս էր նորա մօտ:

Մայրը Գրիստինէին ուրախ տեսնելով՝ մի անգամ ասաց նորան.

—Դու չես զղջում, չէ՞, աղջիկս, որ հետևեցար իմ խորհրդին և գառանը վերադարձրիր իր տիրոջը:

—Ո՛հ, ոչ, սիրելի մայրիկ, ես ոչ միայն չեմ զղջում, այլ ընդհակառակն չափազանց գոհ եմ: Ես միշտ կը հետևեմ քո խրատներին:

---

# ԳԼՈՒԽ II.

## ԱՄՐՈՑԻ ԲԱՐԵԳՈՐԾ ՏԻՐՈՒՀԻՆ ԵՒ ՆՈՐԱ ԱՂՋԻԿԸ

Այն գիւղը՝ ուր բնակւում էր Գրիստինէն, ընկած էր մի անտառապատ սարի ստորոտում, որի բարձրութեան վերայ դարևոր կաղնիներով շրջապատուած մի հին ամրոց կար իւր աշտարակներով: Մի քանի շաբաթ

մոռացրել էր այդ ամրոցը տիկին Վալդեմը, որ որոշել էր միայնակ ապրել, որպէսզի բոլորովին նուիրուէր իւր մի հատիկ աղջկան, Էմիլեայի դաստիարակութեանը, որ մի շատ սիրելի աղջիկ էր հասակով գրեթէ Քրիստինէի հետ տարեկից:

Քանի որ պտուղները չէին վերջացել, Քրիստինէն գրեթէ ամեն օր գնում էր ամրոց ելակ ծախելու, և Էմիլեան մի առանձին զուարճութեամբ գնում էր նորանից, անուանելով նորան իւր գեղեցիկ վաճառականին: Ցերեկը Քրիստինէի քաղած ամեն մի պտուղը հասած էր և կարմիր: Այն ամանը՝ որով նա բերում էր ելակը, թէպէտ և հասարակ կաւից էր շինած, բայց շատ ջնջուկ և մաքուր էր ինչպէս և նորա հագուստը:

Մի անգամ Քրիստինէն ամբողջ մի շաբաթ չէր գնում ամրոց: Էմիլեան, որ սիրում էր լաւ ելակներ կարօտել էր իւր փոքրիկ վաճառողին: Վերջապէս վերջինը եկաւ ամրոց:

—Ինչու այսքան ժամանակ ելակ չէիր բերում, հարցրեց Էմիլեան: Այդ լաւ չէ քո կողմից, դու գիտես որ ես ուրիշներից չեմ գնում:

—Այդ իմ մեղքը չէ, օրիորդ, պատասխանեց Քրիստինէն. իմ մայրը շատ հիւանդ է, գարունքից մինչև հիմա. իսկ այս ամբողջ շաբաթը նա այնքան վատ էր զգում իրան՝ որ ես չէի կարող նորանից հեռանալ և ոչ մի րոպէ: Միայն երէկ երեկոյեան նա փոքր ինչ թեթևացաւ և ես այսօր հէնց որ լուսացաւ վազեցի անտառը ելակ քաղելու, որ մի բան աշխատեմ: Խնդրում եմ, մի նեղանաք, ախր ես իմ մօրս մէկ հատիկն եմ, և բացի ինձանից նա ուրիշ օգնող չունի:



Եւ աղջիկը սրբեց արտասուքը իւր սպիտակ գոգնոցով:

—Բայց մինչև հիմա ինչու դու ինձ չես ասել թէ իմ մայրս հիւանդ է. հարցրեց Էմիլեան: Իմ մայրը խեղճերին միշտ ուրախութեամբ օգնում է:

—Այո, ես լաւ գիտեմ որ դուք ողորմած էք դէպի աղքատները, բայց իմ մայրը ինձ միշտ ասել է. „Երբ որ մի մարդ կարող է ինքը իւր համար հաց աշխատել նա չը պէտք է ուրիշների վերայ ծանրութիւն դառնայ, շատ այնպիսի աղքատներ կան՝ որոնք չեն կարող աշխատել, և այդ կը նշանակէր նոցա մի կտոր հաց խլել“:

Այդ խօսքերը զարմացրին Էմիլեային և նորա գութը շարժեցին:

—Քիչ սպասիր ինձ այստեղ, ասաց նա և գնաց մօր մօտ:

Տիկին Վալդեմը կամեցաւ տեսնել Քրիստինէին:

Երբ որ Էմիլեան նախասենեակից նորան ներս բերեց՝ Քրիստինէն շատ զարմացաւ: Այն չքեղ թղթամածները, մեծ ոսկեզօծ շրջանակներով հայելիները, կարմիր փայլուն կարասիքը, կանաչ մետաքսեայ ճոթերով պատած, որ նա երբեք չէր տեսել, նորան գրեթէ ապշեցրին:

Տիկին Վալդեմը նստած էր գործի սեղանի մօտ, երբ որ նա տեսաւ խեղճ աղջկայ շփոթութիւնը, որ անշարժ կանգնած էր դրան մօտ ու սիրտ չէր անում ներս մտնել, ցաւակցութիւն զգաց դէպի նա: Քրիստինէի հագուստը համեստ, բայց շատ մաքուր էր. նա հագած էր մուգ չթից հագուստ, սպիտակ ու վարդագոյն շերտերով, որ շատ վայելում էր նորան. իսկ

նորա չափազանց գլխարկի վերայ մի փունջ ելակենի էր ցցած իւր պտուղներովն ու ծաղիկներովը, որ բնական և շատ գեղեցիկ էր:

Նա կանգնած էր դրան մօտ դողդոջուն ձեռքերով ամանը բռնած՝ որ լիքն էր պտուղներով, և արտասուաթաթախ աչքերը գետին ձգած:

—Ներս մտիր սիրելիս, ասաց տիկին Վալդեմը քաղցրութեամբ. ներս արի, մի վախենար:

Աղջիկը յանկարծ ինքն իրան տեսաւ հայելու մէջ: Նա մտքովն էլ չէր անցկացրել թէ այդպիսի մեծ հայելիներ էլ կարող են լինել, նորա հայելին մի քառակուսի թզաչափից մեծ չէր: Առաջ նորա աչքին մի ուրիշ պտղավաճառ աղջիկ երևեցաւ, իրան նմանեան: Նա մէկ կանգ առաւ, բայց իւր սեպհական դէմքը տեսնելով՝ ուշքի եկաւ և կարմրեց:

Այդ սխալը նկատելով տիկին Վալդեմը, ժպտաց և կարեկցութեամբ սկսեց հարց ու փորձ անել աղջկան նորա մօր տկարութեան և դրութեան մասին: Քրիստինէն սիրտ առաւ, համարձակօրէն պատասխանում էր բոլոր հարցմունքներին, բայց երբ պէտք եղաւ նկարագրել աղքատութիւնն ու հիւանդ մօր կրած սարսափելի զրկանքները նա շփոթուեցաւ... Հեկեկանքը խափանում էին նորա խօսքերը:

—Մի լար, սիրելի փոքրիկ, ասաց տիկին Վալդեմը: Ես կը հոգամ մօրդ համար. դու ինձ միայն ասա նորա անունն ու հասցէն:

—Գիւղի ծայրին վերջին խրճիթը, պատասխանեց Քրիստինէն. դուք պատուհանից կարող էք տեսնել մեր յարդէ կտուրը, ահա այն տեղ է ծառերի մէջ:

—Տեսնում եմ, տեսնում եմ, ես արդէն վաղուց



էի նկատում այդ հիւղը: Ուրեմն այնտեղ է բնակվում քո մայրը, նորա անունն ինչ է:

—Ռօզալիա Վեռա, բայց գիւղի մէջ նորան սովորաբար կոչում են „աղքատ Ռօզալիա“:

Տիկին Վալդեմը ելակի գնից երեք անգամ էլ աւելի վճարեց և հրամայեց աղջկայ ամանը ընտիր արգանակ լցնել նորա հիւանդ մօր համար:

—Ահա, օրինակելի աղջիկ, ասաց նա էմիլիային, Քրիստինէի դուրս գնալուց յետոյ, դեռ ես չեմ խօսում նորա մաքրասիրութեան ու խելօք պատասխանների մասին, այլ իմ գութը շարժում է նորա ունեցած սէրը դէպի իւր մայրը: Էմիլիա, եթէ մի օր էլ ես հիւանդանամ, ինչպէս Քրիստինէի մայրը, այդ աղջկայ պէս, դու էլ կը խնամես ինձ:

Էմիլիան, որ արտասուքները հազիւ էր պահել Քրիստինէի պատմութեան ժամանակ, փաթաթուեցաւ մօր վզին:

—Ո՛հ, մայրիկ, ես աղօթք կ՚անեմ Աստծուն, որ Նա ձեզ պահէ ամեն դժբախտութիւնից, բայց եթէ, Աստուած մի արասցէ, ձեզ հիւանդութիւն պատահի, ի հարկէ ես էլ նոյն անձնուիրութեամբ կը խնամեմ ձեզ ինչպէս Քրիստինէն:

—Շնորհակալ եմ քեզանից Էմիլիա: Հաւատա որ Աստուած չի թողնիլ այն երեխաներին, որոնք պաշտում են իրենց ծնողներին, և դու կը լսես իմ խօսքը, որ ժամանակով խեղճ Քրիստինէն կը բաղդաւորուի:

Այն ինչ Քրիստինէն ոչ թէ գնում էր այլ վազում էր տուն ուրախութիւնից: Նորա պատմութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց մօրը, իսկ հանեց արգա-

նակը զօրացրեց կնոջը, որ վաղուց հետէ սննդարար կերակուր չէր ունեցել: Նա ասաց.

—Տեսնում ես, սիրելի Քրիստինէ, որ Աստուած երբէք չի թողնում հաւատացողներին:

## ԳԼՈՒԽ III.

### ՏԻԿԻՆ ՎԱԼԴԷՄԸ ԵՒ ԱՂՔԱՏ ՌՕԶԱԼԻԱՆ

Միւս օրը կիւրակի էր: Տնտեսական գործերը կարգի դնելուց ու զաւակը կերակրելուց յետոյ, Քրիստինէն նստեց մօր անկողնի մօտ, և բարձր ու պարզ ձայնով նորա համար գիրք էր կարդում: Այն երեկոն շատ գեղեցիկ էր. մայր մտնող արևի ճառագայթները խաղողի տերևների միջից անցնելով կարմրագոյն լոյսով լուսաւորում էին փոքրիկ սենեակը: Յանկարծ տիկին Վալդէմը Էմիլիայի հետ խրճիթը մտաւ:

—Մայրի՛կ, աղաղակեց Քրիստինէն, ահա տիկին Վալդէմը և իւր աղջիկը:

Հիւանդը շնորհակալութիւն յայտնեց այդ ուշադրութեան համար:

Տիկին Վալդէմը բաւականութեամբ զննում էր փոքրիկ սենեակը: Նորա պատերը շատ սպիտակ էին, աթոռներն ու սեղանը մաքուր, յատակն այնպէս լաւ էր աւլած, որ նորա վերայ մի չնչին կեղտ էլ չէր կար. իսկ դարակում կարգով դարսած ամանները վերին աստիճանի մաքուր էին: Մինչև անգամ վարագոյրն էլ, հիւանդի մահճին էլ չափազանց յստակ էին: Քրիս-



տինէն աթոռ մօտեցրեց տիկին Վալդէմի համար: Վերջինը ուրախութեամբ լսեց որ տան տնտեսութիւնն աղջիկն էր անում և նայելով գրքին՝ գովեց Քրիստինէի պարզ կարդալը, որ նա լսել էր ներս մտնելիս: Սեղանի վերայ էլ երկու ձեռագործի սակառներ տեսնելով նա զննեց նոցա և գովեց ինչպէս և աղջկայ գործը:

—Անշուշտ դուք այստեղացի չէք, ասաց տիկին Վալդէմը. երևում է այստեղ չէք սովորել այս տեսակ գործելն ու կարդալը: Անկասկած մի մեծ դժբախտութիւն կը լինի ձեզ ստիպած այս կողմերում ապաստան որոնել:

—Ա՛խ, այո, տիկին, պատասխանեց խեղճ հիւանդը, ամենաթշուառ հանգամանքների բերմունքն է ինձ ձգել այստեղ:

Եւ Ռօզալիան սկսեց պատմել իւր գլխի անցքը.

—Իմ մարդը որսորդ էր Հռենոսի միւս կողմում մի իշխանի մօտ, և մենք շատ երջանիկ էինք ապրում: Մենք նոր էինք ամուսնացած և Քրիստինէն դեռ մի տարեկան էր: Մէկ էլ յանկարծ, անակնկալ, մի պատերազմ բացուեցաւ: Մեր տէրերը փախան և չը կարողացան մեզ իրենց հետ տանել: Իմ ամուսինը մտաւ եգերների գնդի մէջ, մենք բաժանուեցանք... Այն եղաւ իմ նորան տեսնելս: Նա ինձ մի քանի անգամ էլ նամակ գրեց, յայտնելով թէ առողջ է, բայց յետոյ ես հաստատ տեղեկութիւն ստացայ որ նա մեռել է ծանր վէրքից.... Այդ կորուստը ինձ և իմ աղջկանը դառն աղքատութեան մէջ գցեց: Ես գնացի իմ հայրենիք իմ ազգականներից օգնութիւն խնդրելու. բայց պատերազմը աւերել էր մեր երկիրն էլ և իմ

ծնողները մեռել էին տարափոխիկ հիւանդութիւններից: Ես դուրս եկայ մի որեւիցէ տեղ գտնելու եւ ահա մտայ այս գիւղը: Այս խրճիթը դատարկ էր, սորա բարի տէրերը թոյլ տուին ինձ այստեղ բնակուել այն պայմանով՝ որ ես նոցա երկու աղջիկներին գրել ու կարդալ սովորեցնեմ, որ մեծ յօժարութեամբ կատարեցի: Այդ է իմ ամբողջ պատմութիւնը: Ի հարկէ, ես շատ նեղութիւններ եմ քաշել, շատ անբախտ եմ եղել, բայց երբէք Աստուած ինձ չի թողել որ ձեզ՝ իմ բարերարուհուս բերել է իմ յարդէ յարկի տակ:

Տիկին Վալդեմը կարեկցութեամբ լսում էր խեղճ Բօղալեայէին՝ որի պատմութիւնը նորան մինչեւ արտասուք շարժեց:

—Վայ ինձ, ասաց նա, իմ վիճակն էլ ձերին նման է գուցէ ձերից էլ աւելի տխուր է: Ես էլ ձեզ պէս կորցրել եմ մարդիս եւ ծնողներիս, եւ բացի դորանից ողբում եմ նաեւ որդուս կորուստը: Իմ մարդը ծառայում էր զօրաների գնդում եւ հէնց առաջին կռուին ծանր վէրք ստացաւ: Ինձ իմաց տուին: Ես երկու երեխաներիս հետ շտապով նորա մօտ գնացի, բայց հազիւ թէ կենդանի գտայ: Նա մեռաւ իմ թեւերիս վերայ: Դժուար է ձեզ հասկացնել իմ դրութիւնը: Դորան հետեւեց մի նոր դժբախտութիւն. Ճանապարհները լցուած էին փախչողներով. ես էլ ընկայ բազմութեան յետեւից առանց իմանալու թէ ուր եմ գնում: Երեխաներս էլ ինձ հետ՝ չորս տարեկան որդիս ու Էմիլիան, որ մի տարին նոր էր փոխում: Երբ մենք հասանք Հաւենոս գետին եւ կամենում էինք կամրջից անցնել, նորա մօտ այնքան բեռնակիր սայլեր, զօրբաժինների թնդանօթներ եւ զինուորներով լցուած



կառքեր էին հաւաքուած, որ անկարելի էր նորան մօտենալ: Արեւը մայր էր մտնում, մեզանից շատ քիչ հեռու դեռ պատերազմը շարունակվում էր, մերոնք աշխատում էին ցոյց չը տալ թէ չեն ետ քաշվում: Այն ինչ թնդանօթների ռումբերը մօտենում էին: Ախ, ես երբէք չեմ մոռանալ այդ ահռելի երեկոն, ամենասարսափելին իմ կեանքի մէջ: Մի քանի զինուորներ, որոնք մի մակոյկ էին գտել գետի միւս ափը անցնելու համար, խղճացին ինձ եւ իմ երեխաներին եւ մեզ վեր առան իրանց հետ. բայց մակոյկը այնքան լիքն էր եւ նորան կառավարողներն այնքան անտեղեակ էին իրանց գործին որ գետի մէջ տեղում նաւակը սկսեց ընկղմել: Մի սպայ, որ կանգնած էր միւս ափում, վտանգը տեսնելով, օգնութիւն ուղարկեց իւր կարգադրութեան ներքոյ գտնուող մի փոքրիկ նաւակ երկու թիավարներով: Ես ու աղջիկս արդէն խեղդվում էինք, բայց մեզ դուրս հանեցին եւ տարան ափը, իսկ իմ խեղճ որդիս խեղդուեցաւ եւ մենք չը կարողացանք նորան գտնել:

1002
6949

Տիկին Վալդեմը լաց եղաւ եւ երեսը ձեռքերով ծածկեց, մի քանի րոպէից յետոյ հազիւ կարողացաւ նա շարունակել իւր պատմութիւնը:

—Ես ու աղջիկս այդ գիշեր ցրտից կը սառչէինք, եթէ մի բարի ընտանիք՝ որ նոյնպէս փախչում էր բայց լաւ կառքով, մեզ տեղ չ'առաջարկէր: Սակայն ես այնքան տառապանքները կրելով հիւանդացայ: Փոքր ինչ առողջանալուց յետոյ ես սկսեցի մտածել իմ դրութեան վերայ: Որովհետեւ իմ մարդը մեռել էր եւ արու ժառանգ չէր մնացել, մեր օրէնքով ինձ միայն այս ամրոցը տուին ստացուածք մինչեւ ի մահ, բայց

թագաւորի շնորհիւ լաւ թոշակ նշանակեցին։ Նիւթական միջոցները ապահովուած են, սակայն մարդուս կորուստը անփոխարինելի է ինձ համար։ Պատմութիւնը վերջացնելուց յետոյ տիկին Վալդէմը նայեց ժամացուցին։

—Ձեզ բժիշկ այցելու՞մ է, հարցրեց նա հիւանդին։

—Ոհ, ոչ, պատասխանեց Ռօզալիան. լաւ բժշկի վարձը ես չեմ կարող վճարել, իսկ մի որեւիցէ խաբեբայի էլ կեանքս յանձնել չեմ վստահանում։

—Իրաւ էք ասում, աւելի լաւ է հիւանդութիւնը թողնել բնութեան ներգործութեան, քանի մի որեւիցէ տգէտի խորհուրդներին հետեւել։

Տիկին Վալդէմը խոստացաւ իւր բժշկին ուղարկել Ռօզալիայի մօտ և յայտնեց, որ Աստուծով նա շուտ կ՚առողջանայ։ Յետոյ նա հրամայեց Քրիստինէին, որ ամեն օր գնայ ամրոցը կերակուր բերելու։ Բարի գիշեր մաղթեց և դուրս գնաց Էմիլիայի հետ։

---

## ԳԼՈՒԽ IV.

### ԵՐԿՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Մի երկու շաբաթից յետոյ տիկին Վալդէմն ու իւր աղջիկը կրկին այցելեցին աղքատ Ռօզալիային։ Այն ժամանակ վերջինը բաւականին կազդուրուել էր. դեղերն ու սննդարար կերակուրը շատ էին օգնել նորա առողջանալուն։ Նա արդէն մահճից վեր էր կացել։



Տիկին Վալդէմը նորան գտաւ սեղանի մօտ գործի վերայ։ Տեսնելով իւր բարերարին նա վեր կացաւ տեղից, գնաց նորա առաջև խորին երախտագիտութիւն արտայայտեց արտասուելով։

Տիկին Վալդէմը իւր ձեռագործի սակառն էլ իւր հետ էր բերել. նա նստեց Ռօզալիայի մօտ ու սկսեց գործել։ Նա թոյլ տուեց Էմիլիային Քրիստինէի հետ գնալ զբօսնելու։

Մինչդեռ մայրերը խօսում էին, աղջիկները գնացին խրճթի պարտէզը, որ բաւականին ամայացած՝ բայց դուրեկան տեղ էր զբօսանքի համար։ Քրիստինէն այդտեղ դուրս բերեց իւր գառանը, որ իւր սիրուն թռոյցքներովն ու անսահմանելի հնազանդութեամբն իւր փոքրիկ տիրուհուն, հիացնում, ապշեցնում էր Էմիլիային։

Մեծ քաղաքում կրթուած լինելով Էմիլիան միայն պատկերների մէջ էր ոչխար տեսել, նորան երբէք չէր պատահել գառը տեսնել։ Եւ ահա Քրիստինէի գառը թոյլ էր տալիս նորան իրան փաղաքշել, նորա ձեռքից խոտ էր վեր առնում և վազում էր նորա յետևից։

Էմիլիան ինքն իրան կորցրել էր ուրախութիւնից. Նա շատ և շատ կը ցանկանար այդպիսի մի գառնուկ ունենալ, բայց նա այնքան քաղաքավարի էր, որ այդ ցանկութիւնը չէր յայտնել Քրիստինէին։

Երբ որ տիկին Վալդէմը իւր աղջկայ հետ գնաց ամրոցը, Քրիստինէն պատմեց մօրը, թէ Էմիլիան ինչպէս էր հիանում գառան վերայ և թէ ինչպէս ամեն կողմից երևում էր, որ նա կը ցանկանար այնպիսի մէկն ունենալ։

—Լսիր, սիրելի աղջիկս, ասաց Ռօզալիան, դու գիտես թէ որքան բարերարութիւն արեցին մեզ տի-

կին Վալդեմն ու նորա աղջիկը: Եթէ նոքա չը լինէին՝ գուցէ հիմա ես գերեզմանում կը լինէի, և դու մայրիկ չէիր ունենալ: Արդարութիւնը պահանջում է, որ մենք երախտագիտութիւն ցոյց տանք նոցա, որքան որ մեր ձեռքից կը գայ: Հիմա մեր փոքրիկ բարերարին ամենամեծ դուարճութիւն պատճառելը քեզանից է կախուած: Բայց ես վախենում եմ, չը լինի թէ այդ քեզ համար թանգ լինի: Ի հարկէ ես գիտեմ թէ ինչ կ'անէի, եթէ ես քո տեղը լինէի:

—Իմ փոքրիկ գառն Էմիլիային կը տայիր, վրայ բերեց Քրիստինէն եռանդով: Այո, սիրելի մայրիկ, ես ինքս էլ այդ կ'անեմ հէնց էգուց առաւօտ: Տիկին Վալդեմը պահպանեց նորան՝ ով որ ամենից թանգ է ինձ համար աշխարհիս վերայ, նա պահպանեց քեզ, իմ բարի մայրիկ: Ուրեմն ինչու ես էլ չը տամ նոցա այն՝ ինչ որ ինձ դուարճացնում է:

—Այո, աղջիկս: Շատ ուրախ եմ, որ դու երախտագէտ սիրտ ունիս և խոստովանում եմ, ես քեզանից սպասում էլ էի այդ գործը: Թէ որ այդպէս է հիմա ես գիտեմ ինչով կ'աւելացնեմ Էմիլիայի ուրախութիւնը:

Բօզալեան մտաբերեց, որ նորա մօտ մի կտոր կարմիր ատլաս և մի քանի ոսկէթելեր կային մնացած: Իսկոյն նա գտաւ այդ բոլորը և սկսեց գառան համար ատլասից մի փողպատ շինել՝ վերան էլ ոսկէ թելերից Էմիլիայի անուանատառերը:

Մի քանի օր առաջ Էմիլեան Քրիստինէին մի սպիտակ թիկնոց էր ընծայել, որի մի անկիւնում կապոյտ խայաթելով կարուած էին նորա անուանատառերը: Հէնց նոյն տառերն էլ օրինակ գառան Բօզա-



լիայի համար, որ աշխատեց նոցա վերայ մինչև կէս գիշեր, էլ աւելի: Քրիստինէն չէր հեռանում մօր մօտից և որքան կարող էր օգնում նորան. կամ ասեղն էր թելում կամ ընտիր ոսկէթելեր էր ջոկում նորան տալիս:

Միւս օր առաւօտեան լոյսը բացուելուն պէս Քրիստինէն գառանը տարաւ վտակի ափը և վերջին կտոր օճառը հալեցրեց, նորան լաւ լուացաւ. գառը ձիւնից էլ սպիտակացաւ: Այնուհետև Բօզալեան փողպատ կապեց նորա վզից. ոսկէթել կարերով կարմիր ատլասը չափազանց գեղեցիկ էր երևում սպիտակ փափուկ բրդի վերայ:

Վերջապէս Քրիստինէն գառանը տարաւ ամրոց: Նա առաջ գնաց խոհանոց, որովհետև պառաւ խոհարարուհին միշտ բարեկամութիւն էր ցոյց տալիս նորան. աղջիկը նորանից խորհուրդ հարցրեց թէ ինչ ձևով աւելի լաւ կը լինէր ընծան առաջարկել:

Խոհարարուհին անձայն կամաց ներս արեց գառանը տիկնոջ սենեակն ու կրկին դուռը ծածկեց: Տիկին Վալդեմը պատուհանի մօտ նստած աշխատում էր: Էմիլեան նորա մօտ նստած գիրք էր կարդում: Գառնուկն առաջ անշարժ կանգնած էր դրան մօտ յետոյ սկսեց իւր շուրջը նայել և վերջապէս մայեց: Էմիլեան բարձրացրեց աչքերը և բացականչեց:

—Մայրիկ, մայրիկ, ահա փոքրիկ գառնուկը:

Նա մի կտոր հաց վեր առաւ և տուեց գառանը: Խեղճ կենդանին դեռ կերակրուած չը լինելով ախորժակով կերաւ հացը նորա ձեռքից: Այդ չափազանց ուրախացրեց Էմիլեային: Գառնուկը նորան երեկուանից շատ աւելի գեղեցիկ էր երևում, իսկ երբ նա տե-

սա իւր անուան տառերը փողպատի վերայ, իսկոյն հասկացաւ, որ այդ ընծայ է:

—Ա՜խ, մայրիկ, բացագանչեց նա, ինչ բարի աղջիկ է Քրիստինէն: Նա իւր ամեն բանից աւելի սիրածին ինձ է տալիս: Ես սիրտ չեմ անում այդ ընծան ընդունել. մայրիկ, դուք ինչ էք կարծում:

—Դու պէտք է ընդունես, ապա թէ ոչ կը վիրաւորես խեղճին, պատասխանեց տիկին Վալդէմը: Վեր առ յետոյ ես գիտեմ թէ ինչպէս կը վարձատրեմ Քրիստինէին:

Էմիլեան վազեց խոհանոց՝ իւր փոքրիկ գեղեցիկ պտղավաճառին կանչելու: Համեստ Քրիստինէն կամենում էր առանց ուշանալու տուն գնալ, բայց խոհարարուհին նորան պահել էր և Էմիլեան նորան մեծ դժուարութեամբ կարողացաւ տանել սենեակ:

Այդ ժամանակ տիկին Վալդէմը արկղից մի ոսկէ դրամ հանեց, որի վերայ գառն էր նկարած:

—Սիրելի Քրիստինէ, դու բարի ու ազնիւ սիրտ ունիս, ասաց նա, երբ որ աղջիկը ներս մտաւ և կարմրելով կանգնեց դրան մօտ աչքերը խոնարհացրած. դու իմ աղջկանը մի ընծայ բերիր՝ որ անգին է նորա աչքում: Ուրեմն ինձ էլ ուրախացրու, նորա փոխանակ ընդունիր այս փոքրիկ ոսկէ գառնուկը:

Այդ վարձատրութիւնը մի այնպիսի քնքշութեամբ առաջարկուեցաւ, որ մերժելը անկարելի էր թւում, բայց բոլոր սրտով բերուած ընծայի փոխարէն վճար ստանալ—այդ մէկ միտքը վիրաւորում էր Քրիստինէին:

—Ոհ, ոչ, տիկին, ես չեմ կարող այդ ոսկին ընդունել, ասաց նա, այդ կը փչացնէ իմ բոլոր ուրա-



խութիւնը: Հաւատացնում եմ ձեզ, որ միմիայն խորին երախտագիտութիւնը դրդեց իմ գառանն ընծայ բերել և ես չեմ կարող վարձատրութիւն ընդունիլ:

Որքան էլ ստիպեցին՝ Քրիստինէն փողը վեր չ'առաւ:

Այդքան փոքրիկ և աղքատ աղջկայ այդ անշահախնդրութեան ցոյցը խիստ դուր եկաւ տիկին Վալդէմին:

—Դէ լաւ, ասաց նա, ես կ'աշխատեմ մի ուրիշ միջոց գտնել, այնպիսի միջոց, որ աւելի յարմար լինի քո քնքոյշ զգացմունքներին, ես քո սրտի բարութիւնը գիտեմ գնահատել: Այս օրուանից դու իմ աղջկայ ընկերը կը լինիս: Դու ամեն օր ճաշից յետոյ մեզ մօտ արի, մենք միասին կը պարապենք, իսկ յետոյ մի բան կը մտածենք:

Երբ որ Քրիստինէն վերադարձաւ տուն ամեն բան պատմեց մօրը, վերջինը գովեց նորա վարմունքը:

—Տեսնո՞ւմ ես, աղջիկս, որ ես քեզ ճշմարիտ էի ասում, Աստուած երբէք չի թողնիլ աղքատ, բայց ազնիւ մարդկանց:

---

## ԳԼՈՒԽ V.

### ՄԻ ՆՈՐ ԱՆՁԻ ԵՐԵՒԻԼԸ

Տիկին Վալդէմը փողպատը գննելով եզրակացրեց, որ Բօղալեան ադնեգործութիւն շատ լաւ գիտէր, նա իսկոյն հոգ տարաւ որ նորա համար գործեր գտնէ

ինչպէս իւր կողմից այնպէս էլ իւր բարեկամներից, և այնուհետև խեղճ Րօզալեան կարող էր բաւականին եկամուտ ունենալ:

Տիկին Վալդէմն առաջ հոգում էր Րօզալեայի վերայ լոկ կարեկցութիւնից դրդուած, բայց որքան աւելի էր ճանաչում նորան այնքան աւելի սէր էր զգում դէպի նա, օրէցօր նոցա տեսակցութիւններն աւելի և աւելի երկարատև էին լինում. շատերը զարմանում էին, որ մի բարձր դասակարգի կին այնքան հաճոյք էր զգում մի հասարակ զինուորի այրի կնոջ ընկերութիւնից, բայց տիկին Վալդէմը պատասխանում էր դորա դէմ. „իմ մարդս էլ զինուորական էր, Րօզալեայի մարդն էլ. մէկն էլ միւսն էլ հայրենիքը պաշտպանելով մեռան, և ահա այդ է մեր բարեկամական յարաբերութեանց պատճառը“:

Շատ յաճախ հրաւիրում էր Րօզալեային ամրոց և երեկոները նոքա երեխաների հետ միասին ման էին գալիս շրջակայքում:

Մէկ անգամ զբօսնելիս նոքա բաւականին հեռու գնացին, մտան մի կաղնու անտառ: Երկու մայրերը յոգնեցան և նստան մի նստարանի վերայ, իսկ Էմիլեան և Քրիստինէն սակառները ձեռքներին աւելի առաջ գնացին ելակ քաղելու: Քրիստինէն իւր ընկերոջը տարաւ ելակներով լիքը մի տեղ: Աղջիկներն ուրախ ուրախ լցնում էին իրանց սակառներն. ի հարկէ, հետն էլ չը մոռանալով բերանները քաղցրացնել:

Գառը թռչկոտում էր, ու երբեմն կանանչ խոտը երբեմն թփերի կանանչ տերևները կծում, կամաց կամաց նա հեռացաւ աղջիկներից:

Յանկարծ Էմիլեան տեսաւ մի անծանօթ պատա-



նի, որ ըստ երևոյթին փաղաքշում էր գառանը և միևնոյն ժամանակ խորին ուշադրութեամբ զննում էր նորա փողպատը: Էմիլեան ու Քրիստինէն առաջ վազեցին, վախենալով որ չը լինի թէ անծանօթը փողպատը հանի, կամ գուցէ դեռ. գառանն էլ տանի: Քայլերի ձայնը լսելով պատանին գլուխը բարձրացրեց. նորա երեսը գեղեցիկ և գրաւիչ էր: Նա յուզուած էր երևում և ապշած նայում էր Էմիլեային, յետոյ յարգանօք բարևեց նորան:

Էմիլեան գլուխ տուեց նորան և նկատեց որ նորա ձախ ձեռքին մի ոսկէ մատանի կար:

—Ներեցէք ինձ, ասաց պատանին նկատելով Էմիլեայի անհանգստութիւնը. ես ոչ մի վնաս չէի ուզում տալ այս սիրուն գառանը, որ կարծեմ ձեզ է պատկանում. միայն այդ փողպատի վրայի տառերը զարմացրին ինձ, երևի նոքա ձեր անունն են նշանակում:

—Այո, պատասխանեց Էմիլեան էլ աւելի զարմանալով. այդ տառերը Է. և Վ. իմ անունն են նշանակում, Էմիլիա Վալդէմ:

—Էմիլիա, Էմիլիա, աղաղակեց այն պատանին աշխուժով:

Էմիլեան այդ բարձր բացականչութիւնից վախենալով առաջ այնպէս կարծեց թէ այդ տղան խելագարուած է:

—Գնանք, ասաց նա Քրիստինէի ձեռքից բռնելով, գնանք այստեղից:

—Շնորհ արէք, մի րոպէ կացէք, ասաց պատանին: Ես մի մատանի ունիմ, որի վերայ նոյնպէս Է. և Վ. տառերը կան փորագրուած. այդ էր պատճառը,

որ ես այնպէս զննում էի այդ փողպատը: Ինձ համար շատ կարեւոր է իմանալ թէ որտեղից է այդ մատանին: Ի հարկէ, ես հաւատացած եմ, որ ձերը չէ, որովհետեւ սորա վերայ փորագրուած է 1786 թիւը, երբ որ դուք չը կայիք էլ աշխարհում:

—Մայրիկս էլ ինձ պէս Էմիլիա Վալդէմ է կոչւում:

—Ի՞նչ, միթէ կարելի է: Բայց դուցէ այս մատանին ձեր մօրն է պատկանում: Շնորհ կ'անէ՞ք ինձ նորա մօտ տանելու:

—Ուրախութեամբ, ասաց Էմիլիան. նա այստեղից հեռու չէ: Համեցէք, արէ՛ք իմ յետեւից:

Պատանին գնաց աղջկերանց յետեւից, որոնք տանում էին դաշտը: Մօտենալով այն նստարանին, որի վերայ նստած էր տիկին Վալդէմը, նա ամօթխածութեամբ կանգնեց մի քանի քայլ հեռու: Նա գունատուած էր, և մատանին դողում էր նորա ձեռքին: Վերջապէս նա մօտեցաւ, քաղաքավարութեամբ գլուխ տուեց և կարճ պատմեց, թէ ինչպէս էր պատահել աղջկներին և ինչպէս էր զարմացել գտած փողպատի վերայ տեսնելով նոյն տառերը, որոնք փորագրուած էին նորա մատանու վերայ: Եւ նա մատանին տուեց տիկնոջը:

Տիկին Վալդէմն առաւ մատանին, նայեց նորան, ճչաց և ուշաթափ վայր կ'ընկնէր անշուշտ՝ եթէ Ռօզալիան նորան չը բռնէր:

—Աստուած իմ, այս ի՞նչ եմ տեսնում, ասաց նա. այս իմ մարդու նշանդրէքի մատանին է. նայեցէք այս մատիս մատանուն, այս իմ մարդս է ընծայել ինձ հարսանիքից առաջ: Ո՛հ, ասացէք ինձ պա-



տանեակ, այս մատանին որտեղից է: Ո՞վ էք դուք և ովքեր են ձեր ծնողները:

Անծանօթն էլ աւելի գունաթափուեց և դողում էր ամբողջ մարմնով:

—Իմ հայրը սպանուել է պատերազմում, ասաց նա վերջապէս: Ես յիշում եմ, որ իմ մայրը մի շատ գեղեցիկ կին էր: Երբ որ մենք բաժանուեցանք հօրիցս նա սև էր հագնում և միշտ լալիս էր: Նոյնպէս յիշում եմ, որ ես մի փոքրիկ քոյր ունէի. մենք մօրս հետ մակոյկով անցնում էինք Հռենոսից: Մակոյկը շուռ եկաւ, բայց ինձ ջրից հանեցին: Այն ժամանակ ես մօտ չորս տարեկան էի: Այն ժամանակուանից ես էլ ոչ մի տեղեկութիւն չեմ ունեցել ոչ մայրիկիս, ոչ քրոջս մասին: Այս մատանին իմ կապոցի մէջ է գտնուել: Այդ էր, այդքանը կարող եմ ասել ես իմ ընտանիքի և իմ ծագման մասին: Իմ անունը Կարլ է:

—Ա՛հ, Կարլ, աղաղակեց տիկին Վալդէմը պատանու վզովն ընկնելով, դու իմ որդին ես, և հօրդ կենդանի պատկերը... Ո՛վ Աստուած, քո կամքն անհասանելի է:

Եւ նա սկսեց գրկախառնել իւր որդուն: Սկզբում Կարլի լեզուն կարծես թէ կապուել էր, բայց յետոյ նա ասաց.

—Մայրիկ, մայրիկ, Աստուած իմ, այս ինչ բաղդաւորութիւն է:

Էմիլիան Քրիստինէի կրծքին սեղմուելով դողում էր և լաց էր լինում:

—Էմիլիա, նայիր, կանչեց տիկին Վալդէմը. սա քո եղբայրն է.—Սա քո քոյրն է, Կարլ, գրկեցէք միմեանց, որդիքս:

Քոյր ու եղբայրը միմեանց գրկեցին:

Տիկին Վալդէմն ու նորա որդիքն այնքան բաղդաւոր էին, որ բոլոր իրանց շուրջը եղողներին մոռացան: Երբ որ արեւը մայր մտաւ եւ մութն ընկաւ՝ նոքա նոր յիշեցին, որ ժամանակ է տուն դառնալու:

---

## ԳԼՈՒԽ VI.

### ԿԱՐԼԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՒՐ ԵՐԵԽԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երբ որ եկան ամրոց՝ տիկին Վալդէմը հրամայեց մի փոքրիկ ընտանեկան խնջոյք պատրաստել: Էմիլեան սեղանի վերայ մի սպիտակ նուրբ սփռոց փռեց, փառաւոր ամաններ հանեց շարեց եւ երկու մեղրամոմեր վառեց արծաթէ շամադաններում. Կարլը նստեց մօր ու քրոջ մէջ տեղը, իսկ Ռօզալիան ու Քրիստինէն նստեցին հանդէպ, որովհետեւ տիկին Վալդէմը նոցա էլ ընթրիքի հրաւիրեց:

—Առանց ձեզ ու առանց ձեր գաւառը ես բախտ չէի ունենալու իմ որդուն գտնելու, ասաց նա:

Պատանին երկար ճանապարհ եկած լինելով՝ ուտում էր մեծ ախորժակով, իսկ նորա մայրն ու քոյրը ոչինչ չէին ուտում եւ կարծես չէին կշտանում այդ անսպասելի հիւրին նայելուց: Ընթրիքից յետոյ քաղցրեղէններ ուտելիս տիկին Վալդէմը խնդրեց որդուն՝ որ իւր պատմութիւնն անէ:

Կարլը պատմեց.

—Այն աղետալի օրը՝ երբ մի գնչուհի ինձ ջրից



հանեց՝ մի ամենաբարի քահանայ ինձ ընդունեց իւր տունը Հռենոսի միւս ափում: Ի հարկէ, հիմա ես մոռացած կը լինէի այն բոլորը, ինչ որ առաջ պատմեցի ձեզ իմ նախկին մանկութեան մասին, եթէ բարի ծերունին իմ մտքում պահած չը լինէր այն կցկտուր պատմութիւնները, որ նորա տունը մտած օրս պատմել էի նորան: Յարգելի ծերունին ինքը գնաց շրջակայ գիւղերը, որ իմ մօր մասին մի բան իմանայ: Նա պատահել էր մեզ հետ մի մակոյկով անցնող մէկին եւ նորան պատմել էին մի սպայի այրի կնոջ մասին, որ սեւ էր հագած եւ երկու երեխաներ ունէր, բայց չէին կարողացել ճիշդն ասել՝ նա ազատուեցաւ թէ ոչ: Ծերունին գետի միւս կողմն էլ էր անցել, սակայն նորա բոլոր խուզարկութիւններն անյաջող եղան: Այն կապոցի մէջ, որ ինձ ջրից հանող գնչուհին տուել էր նորան, ոչ մի թուղթ չը կար եւ մեր բաներից միայն մի մատանի էր մնացել ձեզ յայտնի տառերը վերան:

Այն քահանան շատ գիտնական մարդ էր, եւ հէնց որ ես քիչ մեծացայ՝ նա սկսեց ինձ ուսում տալ, փոքր ինչ կրօնագիտութիւն, լատիներէն եւ շատ առարկաներ. նա մինչեւ անգամ ինձ նկարչութիւն էլ էր դաս տալիս: Բայց պէտք է ասել, որ իմ բարերարը խիստ աւերուել էր պատերազմից եւ առժամանակ հաղիւ թէ մի կտոր հաց ունէր, այնպէս որ նորա կարողութիւնը չէր ներում ինձ պահել: Չը կամենալով ինձ թողնել բաղդի բերմունքին, նա գրեց Գերմանիա, իւր մէկ հին բարեկամին՝ թէ արդեօք չի՞ կարող նա մի խեղճ բայց ազնիւ տղայի ուսումը շարունակելու համար միջոցներ գտնել: Դորա համար շուտով ամենայաջող պատասխան եկաւ: Տէրտէրի բարեկամը խոստա-

նում էր ինձ իւր հոգաբարձութեան տակ ընդունել, և խորհուրդ էր տալիս շուտով ուղարկել ինձ այնտեղ, ուր հասնեմ ճեմարանի հարցաքննութեանը: Այն ժամանակ մեր կողմերում մի այնտեղացի վաճառական կար, որ անձամբ ճանաչում էր իմ նոր բարերարին, և որովհետև նա պատրաստւում էր տուն գնալ՝ ինձ էլ տեղ առաջարկեց իւր կառքի մէջ: Իմ մտքից երբէք չի ջնջուիլ այն օրը՝ երբ ես թողի իմ հոգևոր հօր տունը: Նորա խրատներն այնքան կակուղ, հետն էլ այնքան համոզիչ էին, որ մինչև իմ սրտիս խորքը թափանցեցին: Նա իւր խրատն այս խօսքերով վերջացրեց.

—Սիրելի որդեակ, գուցէ մենք վերջին անգամն ենք տեսնւում, որովհետև ես արդէն եօթանասուն տարեկան եմ: Միտդ պահիր այսքանը. սիրիր Աստծուն, սիրիր մերձաւորիդ և պահիր խղճիդ մաքրութիւնը: Նա հանեց իւր վերջին երկու ոսկէ դրամները, որոնք այժմ էլ ես պահած ունիմ, և տուեց ինձ ճանապարհածախք: Յետոյ „Հետևողութիւն Քրիստոսի“ գիրքը ինձ յիշատակ ընծայեց: Ծերունին օրհնեց ինձ և ես լալով հեռացայ նորանից:

Այստեղ արտասուքը չը թողեց Կարլին շարունակել իւր պատմութիւնը—նորա մայրը, քոյրը, Բօղալեան ու Քրիստինէն սաստիկ յուզուած էին:

—Ոհ, այդ բարի քահանան բարձր առաքինութեանց տէր մարդ է. ասաց տիկին Վալդէմը: Այդ բաղդ է, որդիս, որ Աստուած քեզ այդպիսի առաջնորդ է ուղարկել:

---



# ԳԼՈՒԽ VII.

## ԿԱՐԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Քիչ հանգստանալուց յետոյ Կարլը շարունակեց իւր պատմութիւնը.

—Այն վաճառականը որ ինձ առել էր իւր հետ, ինձ ամեն տեսակ ուշադրութիւն էր ցոյց տալիս, և հօր պէս էր վարւում ինձ հետ: Մենք միմեանցից բաժանուեցանք այստեղից երկու մղոն հեռու, որովհետև նա պէտք է շեղուէր միւս կողմը դէպի իրանց տուն: Նա խոստացաւ իմ սնդուկը տեղ հասցնել և շատ բարեկամական կերպով բաժանուեցաւ ինձանից. այնուհետև ես իմ ճանապարհը շարունակեցի ոտքով: Երեկոյեան դէմ ես անցնում էի այս ամրոցը շրջապատող անտառի միջով, և շատ մանգալու սովոր չը լինելով, յոգնեցայ երկար ճանապարհորդութիւնից: Այդտեղ էլ հողէ նստարան տեսայ նստեցի հանգստանալու: Երեկոյեան վերջալուսի տակ այս ամրոցն ինձ շատ գեղեցիկ երևեցաւ, այնքան՝ որ ես մատիտ ու թուղթ հանեցի թղթակալից և սկսեցի նկարել: Սակայն ես շուտով ընդհատեցի այդ գործս: Գիշերուան մօտենալը և խորին լռութիւնն ինձ վերայ թախծութիւն բերին. միայնութեան զգացմունքը տիրեց ինձ. ես էլի հանեցի իմ մատանին, ինչպէս անում էի միշտ ամեն ծանր րոպէներում, որովհետև այդ ինձ յիշեցնում էր իմ ծնողներից մէկին: Յանկարծ մօտիկ թփերի մէջ մի ձայն լսուեցաւ: Նայեցի—տեսնեմ մի գառն է կարմիր փողպատով: Բայց ինձ աւելի ապշեցրին նո-

լա վերայ կարուած տառերը... Մնացածը դուք գիտէք:

—Որդեակս, ասաց տիկին Վալդէմը, մեզ մնում է միայն գոհանալ Ստեղծողից նորա անչափ գթութեանց համար:

Բոլորը վեր կացան սեղանից և նոցա ընդհանուր ջերմ աղօթքը բարձրացաւ երկինք:

---

# ԳԼՈՒԽ VIII.

## ԲԱՐԻ ՔԱՀԱՆԱՆ

Կարլն ինքն իրան իւր ընտանիքի մէջ տեսնելով ուրախութիւնից ուշքը կորցրել էր: Որքան աւելի էր ճանաչում իւր յարգելի մօրը՝ այնքան աւելի էր սիրում նորան: Օրէ ցօր նա աւելի մօտիկ էր բարեկամանում և քրոջ հետ:

Կարլի Վալդէմ գալովն այդ ազնիւ և յարգելի գերդաստանի բարեկեցութիւնն աւելացաւ: Նորա նախնիների սեպհականութիւնն՝ ամբողջը տրուած էր նորա մօրը միայն մինչև մահ. իսկ այժմ նա, իբրև օրինաւոր ժառանգ, իրաւունք ունէր իւր հօր բոլոր կալուածների վերայ:

Մի օր ճաշից յետոյ տիկին Վալդէմը նստած էր ամրոցի դրան մօտ շագանակենիների շուաքի տակ և ընտանիքն ուրախ խօսակցութեան մէջ էին, երբ մէկ էլ յանկարծ մի պատկառելի կերպարանքով ծերունի տեսան, որ իւր ձեռքի երկար գաւազանին էր յենած:



նորա մազերը ձիւնի պէս սպիտակ էին, հագուստին նայելով հոգևորական պէտք է լինէր:

—Մեծդ Աստուած. դա իմ բարերարն է, բացականչեց Կարլը, վազելով ծերունու առաջ: Որտեղից որտեղ, հայրիկ: Այդ ինչպէս յանկարծ այս կողմերն եկաք:

—Սիրելի որդեակ, պատասխանեց ծերունին. քո նամակը կարդալուց յետոյ, չը նայելով իմ ծերութեանը ես իսկոյն վճռեցի, որ գամ տեսնեմ քո բաղդաւորութիւնը: Համ էլ ես ցանկացայ ծանօթանալ իմ որդեգրիս մայրիկի և քոյրիկի հետ:

Կարլը փաթաթուեցաւ նորա վզովը, իսկ տիկին Վալդէմը իւր աղջկայ հետ ջերմ երախտագիտութիւն յայտնեցին նորան:

Ծերունուն բազմեցրին և առաջարկեցին ճանապարհից յետոյ իւր ուժերը կազդուրել: Արժանապատիւ ծեր հայրը անկեղծ սրտով ուրախանում էր իւր որդեգրի անակնկալ բարեբաղդութեան վերայ:

Այն ժամանակ Բօղդանն ու իւր աղջիկն ըստ սովորութեան եկան ամրոց: Տիկին Վալդէմը ներկայացրեց նոցա ծերունուն և պատմեց խեղճ կնոջ պատմութիւնը: Երբ Բօղդանն տանտիկնոջ խնդրանօք գնաց ամրոց կարգադրելու, որ այնտեղ ամենայն ինչ պատրաստեն, երկու աղջիկներն աննկատելի կերպով դուրս գնացին: Նոքա վարդագոյն պսակներով զարդարեցին միշտ մաքուր լուացած և սանրած գառանը և բերին ծերունու մօտ, որին այդ նուէրը շատ ուրախացրեց: Գեղեցիկ կենդանուն փաղաքշելով, նա ասաց տիկին Վալդէմին և Էմիլիային:

—Դուք ինձ ծանօթացրիք երկու անձանց հետ,

որոնց միջոցով Աստուած ձեզ բաղձ է ուղարկել մինչև անգամ չը մոռացաք այս գեղեցիկ դասանն էլ, որ այստեղ փոքր դեր չի խաղացել: Ուրեմն ինձ էլ թոյլ տուէք իմ կողմից ծանօթացնել ձեզ այն բարի զինուորի հետ՝ որ իւր կեանքը վտանգի ենթարկելով ընկաւ Հռենոսի մէջ և ալիքներից խլեց մեր սիրելի Կարլին: Այդ մարդը դեռ կենդանի է և իւր բարի գործից յետոյ շատ անյաջողութիւններ և թշուառութիւններ է կրել: Մի քանի ծանր պատերազմներում կռուելով նա վտանգաւոր վէրք էր ստացել: Նորան էլ ուրիշ վիրաւորների հետ ձգել թողել էին սայլի մէջ և զօրքի հետ քաշուելու պատճառաւ նոցա բոլորի վէրքերն էլ մինչև անգամ կապուած չէին: Այդ հիւանդատար սայլերի երկար շարքը մի անգամ ձգուած էր փոքրիկ քաղաքի արուարձանով և անցնում էր մի ներկարարի տան մօտից, որի տանն այդ զինուորը մի քանի շաբաթ մնացել էր և որի կեանքն ու կայքը նա ազատել էր պաշտպանելով ասպատակներից: Ներկարարն էլ հէնց կանգնած էր պատուհանի մօտ և նայում էր նոցա արտաճմլիկ ուղևորութեանը: Վիրաւորների մէջ նա ճանաչեց իւր տնւորին, որ տխուր ակնարկներ է ձգում այն տան վերայ, ուր նորա հետ ազգականի պէս էին վարվում: Ներկարարը դուրս վազեց և սկսեց համոզեցուցիչ կերպով խնդրել ձիաւորների սպայից, որ նա թոյլ տայ իրան իւր ծանօթ կիսակենդան վիրաւորին ընդունել իւր մօտ: Սպան առաջ դժուարանում էր, բայց երբ որ բժիշկն ասաց նորան թէ հիւանդը չի հասնիլ մինչև հիւանդանոց և ճանապարհին կը մեռնի, նա կատարեց ներկարարի ցանկութիւնը: Վիրաւորին տարան տուն և խնամեցին նորան ամենայն հո-



գացողութեամբ և հարկէ լաւ բժիշկ էլ հրաւիրեցին: Հիւանդը ողջ մնաց, որ ոչոք չէր սպասում, բայց երկար ժամանակ դեռ այնքան տկար էր, որ չէր կարող ճանապարհ գնալ կամ մի որևիցէ գործով պարապել: Ներկարարը հարուստ էր և չէր դժուարանում իւր մօտ մի օտար մարդ պահել, իսկ զինուորը, որ հիանալի ձեռք ունէր օգնում էր նորան գրագրութեանց մէջ և նորա առևտրական մատեանները գեղեցիկ կարգի մէջ էր պահում: Այդպէս ապրում էին նոքա և շատով կապուեցան միմեանց հետ ամենասերտ բարեկամական կապերով, բայց մի առժամանակից յետոյ հանգամանքները փոխուեցան: Հազիւ թէ զինուորն սկսեց յայտնի լաւանալ, ներկարարը յանկարծակի մեռաւ: Եթէ մահն այդպէս անակնկալ չը գտնէր վերջինին անկասկած նա չէր մոռանալ կտակի մէջ յիշել իւր բարեկամին, բայց նա ժամանակ չ'ունեցաւ այդ անելու: Նորա գործարանը ծախուեցաւ և նորա ժառանգներն իրանց ապերախտութիւնն ու տմարդութիւնը մինչև այնտեղ հասցրին, որ զինուորին դուրս արին տանից, գոնէ ճանապարհի համար էլ մի բան չը տուին, չը նայելով որ նա դեռ ձախ ձեռը չէր կարողանում գործածել: Խեղճը վճռեց գտնել իւր գունդը և արձակուրդ խնդրել, նորա ճանապարհն էլ մեր գիւղի մօտովն էր ու նա բնականաբար ուզեց իմանալ թէ այն երեխայի վերջն ինչ եղաւ՝ որին նա ազատել էր և յանձնել իմ հովանաւորութեանը: Նա եկաւ ինձ մօտ: Այդ քո դուրս գալուց մի քանի օր յետոյ էր Կարլ: Ես նորան մեծ ուրախութեամբ ընդունեցի և պահեցի ինձ մօտ նորա համար մի յարմար գործ գտնելու յուսով. մէկ էլ յանկարծ քեզանից նամակ եմ

ստանում: Ես չէի կարող յաղթել իմ ցանկութեանը՝ քո բաղդաւորութիւնը տեսնել ուրախանալ, և շատ օգտակար համարեցի այն բանի գիւտին էլ հետ բերել մէկ՝ նորա համար, որ նա վկայի թէ տիկին Վալդէմի նաւակն ընկղմելիս նա Հաւենսից մի չորս տարեկան երեխայ հանեց և յանձնեց ինձ մի կապոցի հետ, որի մէջ ուրիշ առարկաների թւում կար և մի գրօշմած ոսկէ մատանի, թէ դու յիրաւի տիկին Վալդէմի որդին ես որին խեղդուած էին համարում: Մէկ էլ որ ես հաւատացած էի թէ Կարլը երբէք ապերախտ չի գտնուիլ դէպի այն մարդը, որ նորա կեանքն ազատեց: Բացի դորանից ես գիտէի, որ մի ազնիւ ծերունի զինուոր երբ գրագէտ ու գիտնական է՝ միշտ կարող է պաշտօն գտնել մի մեծ կալուածքում:

—Բա ո՞րտեղ է, ո՞ւր է նա միաբերան աղաղակեցին տիկին Վալդէմը, Կարլն ու Էմիլիան:

Տէրտէրը դարձաւ և ձեռքով արեց մի մարդու՝ որ քաշուած կանգնած էր մի կողմ, յետոյ նորա ձեռքից բռնեց ու ներկայացրեց.

—Ահաւասիկ նա իմ բարի Յովհաննէս Վէտը:

—Յովհաննէս Վէտ, աղաղակեց խեղճ Բօղալեան յափշտակուած, ով Աստուած իմ, դա իմ ամուսինն է:

Այդ խօսքերն ասեց, նա դողալով ուրախութիւնից փաթաթուեցաւ գինւորի պարանոցովը: Բոլորը զարմացած ապշած մնացին: Երկար ժամանակ երկու ամուսինները գրկախառնուած կանգնած էին. վերջապէս Բօղալեան ասաց.

—Քրիստինէ, Քրիստինէ, ահա քո հայրը, արի համբուրիր նորան:

Աղջիկը վազեց իր հօր մօտ և նա նորան գիրկն առաւ:



Առաջին հիացումն անցնելուց յետոյ, Կարլը գրկեց իր կեանքն փրկողին, տիկին Վալդէմն ու Էմիլիան սեղմեցին նորա ձեռքը և շնորհակալութիւն արեցին Կարլին փրկելու համար:

—Իմ բարի Վէտ, ասաց տիկին Վալդէմը, դուք ձեր կինը և ձեր աղջիկն այսուհետև տեղափոխուեցէք ամրոց—մենք չենք բաժանուիլ, իսկ երբ որ ես կ'ստանամ ու մեր ձեռքը կ'առնեմ հանգուցեալ ամուսնու բոլոր ստացուածքները, որին յոյս ունիմ, այն ժամանակ ես ձեզ համար այնպիսի տեղ կը գտնեմ, որից դուք գոհ կը մնաք:

## ԳԼՈՒԽ IX.

### ԲՈԼՈՐ ԳԻՒՂԱՑԻՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Զօրի մէջ, գիւղումը դեռ ոչինչ չը գիտէին թէ այն քանի օրերն ինչ էր անցնում ամրոցում: Տիկին Վալդէմը կամենում էր անվրդով վայելել իր բաղդաւորութիւնը մի առժամանակ և նորա մարդիկը ոչինչ չէին հրատարակում: Բայց տէրտէրին բերող կառավարը, որ եղել էր հիւրանոցում լռութիւն պահելու հարկ չէր տեսնում: Երեկոյեան երբ, գիւղացիք վերադառնում էին գործից, իսկ նա տանում էր ձիաները ջրելու, հազար ու մէկ հարցեր տուին նորան գիւղավարի՝ ո՞վ ես, ո՞րտեղից, ինչո՞ւ ես եկել և այլն:

Նա պատասխանեց.

—Ես մեր կողմերից մի տէրտէր եմ բերել, որ դաստիարակել է ձեր երիտասարդ պարոնին:

—Ի՞նչ պարոն, աղաղակեցին գիւղացիք, մենք գիտենք, որ նա խեղդուել է երեխայութեան ժամանակ:

—Ոչ, նա ողջ առողջ է և այժմ գտնվում է ամրոցում, պատասխանեց կառավարը, մի մարդ նորան ջրից հանեց. այն մարդուն էլ ես բերել եմ տէրտէրի հետ: Ես այն ծերունու մօտ եմ ծառայում և երբ որ ձեր պարոնը դեռ երեխայ էր, ես շատ անգամ եմ թոյլ տուել նորան նստել այս սև ձիու վերայ: Եւ ես ձեզ ասեմ, պարոն Կարլը մի պատուական տղայ է, ես նորան միշտ սրտանց սիրել եմ, նա էլ ինձ երբէք ուրիշ կերպ չէր կանչում, այլ միշտ բարի ծերունի Յովհաննէս: Եւ հաւատացէք, նա ամեն ջանք գործ կը դնի, որ ձեզ օգտակար լինի:

Այդ գեղեցիկ նոր լուրը մէկից միւսի բերանն անցնելով, արագ տարածուեցաւ բոլոր շրջակայքում: Շուտով գիւղացիները հաւաքուեցան և խմբովին գնացին ամրոց աչքալուսանք:

Տիկին Վալդէմն այդ նկատելով ասաց.

—Տէր Աստուած, դոքա ինչ են ուզում:

Խոհարարուհին այնտեղից ասաց.

—Տիկին, դոքա մեր գիւղացիներն են, գալիս են վառուած ցանկութեամբ՝ իրանց նոր պարոնի գալուստը շնորհաւորելու. նոքա նոր են իմացել այդ ուրախալի դէպքը:

—Ես շատ ուրախ եմ դորա վերայ, ձայն տուեց այն կողմից տէրտէրը և կը խնդրեմ թոյլ տալ նոցա երախտաւորդ տիրոջը իրանց ներկայացնել:

Տիկին Վալդէմն ի հարկէ համաձայնութիւն յայտնեց:



Երբ գիւղացիք հաւաքուեցան բակը և տիկին Վալդէմը իր որդւոց հետ դուրս եկաւ նոցա առաջ, արժանապատիւ տէր հայրը Կարլի ձեռքից բռնելով դարձաւ նոցա չափազանց ջերմ և հոգևլից խօսքերով. նա կարճ ձևով պատմեց թէ երախտաւորդն ինչպէս էր ազատուել. պատմեց նոյնպէս և բարի Վէստի արկածները և կարողացաւ այնպէս ազդել լսողների վերայ, որ նոցանից հազիւ թէ մնացին ոմանք, որ լաց չեղան:

---

## ԳԼՈՒԽ X.

### ՄԱՆԿԱԿԱՆ ՏՕՆ

Մի քանի օրից յետոյ տիկին Վալդէմը Կարլի հետ գնաց մայրաքաղաք, որդուն ներկայացրեց Թագաւորին և խնդրեց որ իրան վերադարձնեն իւր հանգուցեալ մարդու կալուածքները: Եկաւոր տէրտէրն ու Յովհաննէս Վէստը վկայեցին՝ թէ նա յիշեալ երախտաւորդ պարոն Վալդէմն էր, որ խեղդվում էր Հռենոսում: Թագաւորը դիւրութեամբ լսեց այդ բոլորը և շուտով հրամայեց մարդու բոլոր կալուածքները վերադարձնել այրուն, նշանակելով նորան խնամակալ իւր որդուն մինչև վերջինիս չափահաս լինելը:

Վալդէմ ամրոցը իւր մէջ երբէք այնպիսի ուրախութիւն չէր տեսել, որպիսին ունեցաւ՝ երբ որ տէրերը վերադարձան մայրաքաղաքից: Բայց շուտով մի ամպ նորա բաղդաւոր բնակիչներին տխրեցրեց: Ծերունի քահանան կարօտելով վերջապէս իւր ծուխին՝ սկսեց

խնդրել որ տուն յետ դառնայ։ Բոլորը շնորհակալու- թեան և ցաւակցութեան արտասուքներով ճանապարհ դրին բարի ծերունուն։

Փոքր ինչ յետոյ Կարլն էլ գնաց քաղաք ուսումն աւարտելու։

Վէտան էլ արձակուրդ առնելով ամբոցապատական գոյքերի կառավարչի պաշտօն ստացաւ տիկին Վալդէմից, և որովհետև նա հմուտ անտառաբոյծ էր՝ այդ պատճառաւ տիրուհին նորան գլխաւոր վերատեսուչ նշանակեց իւր բոլոր անտառների վերայ։

Տարիներ անցան։ Կարլը փառաւոր կերպով աւարտեց իւր ուսումը և վերադարձաւ ամրոց, բարոն (baron) Վալդէմի կոչումն ստանալով։

Մէկ անգամ իւր մօր ու քրոջ հետ նստած դրան մօտ, շականակենիների տակ, նա մի մեծ հօտ ոչխարներ տեսաւ, որոնք վերադառնում էին արօտից։ Էմիլեայի գառը ոչխար էր դարձել, որ նոյնպէս արդէն ունեցել էր իւր սերունդը, և Էմիլեան այդ փոքրիկ հօտը իւր անձնական սեփականութիւնն էր համարում։ Քոյր ու եղբայր զուարճանում էին այդ կենդանիները համարելով։

—Հիմա մենք կարող ենք, որդիք, իրագործել մեր այն նախագիծը, որի մասին այնքան անգամ դատել ենք, ասաց տիկին Վալդէմը։ Այժմ մեր հօտը բազմաթիւ է։ Էգուց հինգերորդ տարեդարձն է այն երջանիկ օրուան, որ այսպէս միացրեց մեր ընտանիքը և այնքան անկեղծ ուրախութիւն պատճառեց մեր փոքրիկ գիւղի բնակիչներին։ Այդ պատճառաւ ես ցանկանում եմ, որ էգուցուան օրը մի ընդհանուր տօն լինի մեր բոլոր գիւղացոց երեխաների համար։



Տիկին Վալդէմը իւր որդու և աղջկայ հետ գնացին դուռը, մի որոշեալ թիւ ընտիր ոչխարներ ջոկեցին և հրամայեցին հովուին, որ նոցա առանձին տան մէջ պահի։ Միւս օր առաւօտը վաղ հրամայուած էր մի լաւ լուանալ այդ ոչխարներին, որոնց Կարլն ու Էմիլեան զարդարեցին ծաղիկներով և ժապաւէններով։

Այնուհետև բոլոր գիւղի բնակիչները իւրեանց որդոց հետ հրաւիրուած էին ամրոց կէսօրից յետոյ ժամի երկուսին։ Բոլոր տղայքն ու աղջիկները մեծ ուրախութեամբ ստացան այդ հրաւէրը և ժամանակից դեռ մի ժամ էլ առաջ արդէն զարդարուած կանգնած էին ամրոցի դրան մօտ։

Նշանակուած ժամանակին դռները բացուեցան։ Երեխաները հիացած մնացին։ Սրահը զարդարուած էր կիսաշրջաններով ու պսակներով, դռները ծածկուած էր կանաչով, իսկ մէջ տեղ մի երկայն սեղան էր բաց արած որի վերայ մեծ ափսէներով քաղցրեղէններ և ուրիշ համադամներ էին շարուած, իսկ նոցա միջոցներում սակառներով խնձորներ, տանձեր, դեղձեր, որոնց զանազան գոյները մի բազմերանգ ու գունեկան խառնուրդ էին առաջ բերում։ Դոցա մէջ էլ վճիտ, կարմիր մեղրով լիքը շիշեր էին շարուած։

Երեխաներին սեղան հրաւիրեցին, մի կողմը աղջիկներին նստեցրին, միւս կողմը տղաներին և խնջոյքը սկսուեց։ Երեխաներն իրանց կեանքում այդպիսի բան չէին տեսել և երբ որ բոլոր քաղցրեղէնները կերան վերջացրին, նոցա առաջարկեցին օշարակ խմել տիկին Վալդէմի, Կարլի և Էմիլեայի կենացը։

Խնջոյքը վերջանալուց յետոյ յանկարծ երաժշտութեան ձայներ լսուեցան։ Մի քանի երիտասարդներ

սպիտակ շորերով և ծաղկազարդ գլխարկներով մտան սրահը և իրանց պարզ նուագարաններն ածեցին: Նոցա յետևից եկան մի հօտ ձիւնափայլ ոչխարներ, որոնք զարդարուած էին գոյնզգոյն ժապաւէններով: Ծերունի հովիւը իւր շների հետ գալիս էր ամենից յետևից: Երեխաները ուրախութիւնից թռչկոտեցին և սկսեցին ծափահարել:

—Այս ինչ լաւ է, այս ինչ հրաշալի բան է, բացականչում էին նոքա. մենք երբէք այսպիսի գեղեցիկ ոչխարներ չենք տեսել:

Իսկ երբ նոքա այն էլ իմացան՝ թէ այդ գեղեցիկ ոչխարները պիտի բաժանուէին, իւրաքանչիւր ընտանիքին պէտք է մի ոչխար տրուէր, նոցա ուրախութեանն էլ չափ չը կար:

Աւելի ուրախութեան համար և որպէսզի կողմնապահութեան ոչ մի նշոյլ էլ չը լինի, տիկին Վալդէմը կամեցել էր որ վիճակով բաժանուէին ոչխարները. դորա համար ամեն մի ոչխարի վերայ մի թուանշանով տոմսակ կար: Սեղանի վերայ էլ մի տափակ անօթ էր դրուած, որի մէջ նոյնպէս թուանշանով տոմսակներ կային խողովակի պէս փաթաթուած: Երեխաները հերթով հանում էին տոմսակները անօթից և մինչդեռ հանողը որոնում էր իւր ոչխարին՝ երաժշտութիւնն ածվում էր: Այս վիճակախաղն այնքան դուր եկաւ ամենքին էլ՝ որ ամբողջ սրահը դղրդում էր անդադար ուրախութեան ձայներով:

Երբ որ բոլոր ոչխարները բաժանուեցան, երեխաները մեծ հանդէսով և երաժշտութեամբ տարան նոցա գիւղը:

Որդի չ'ունեցող գիւղացիքն էլ իւրաքանչիւրը մի



մի ոչխար ստացան, իսկ այն բարի մարդիկը, որոնք խեղճ Բօզալխային տուն էին տուել՝ տասը ոչխար ստացան:

Քրիստինէին զառն ընծայող կալուածատէրն էլ չէր մոռացուած, բայց որովհետև այդ մարդը ինքն էլ մի մեծ հօտ ունէր և մի ոչխարի ընծան նորա համար ոչինչ նշանակութիւն չ'ունէր, այդ պատճառաւ տիկին Վալդէմը նորան կիւրակի օրը ճաշելու հրաւիրեց ամրոց: Կալուածատէրը յետոյ շատ անգամ ասում էր, թէ այդ պատիւը նորան աւելի ուրախացրեց քան թէ հարիւր ոչխարի ընծան:

Միւս օրը բոլոր ընտանիքների հայրերը տօն օրուայ շորերով գնում էին ամրոց տիկին Վալդէմին և նորա որդուն շնորհակալութիւն անելու:

Երախտապարտ պարոնը շատ է պնդում, որ գիւղացիները ոչխար պահեն:

—Ես մտադիր եմ, ասաց նա իւր խօսքի վերջում, մեր գիւղում մի գործարան շինել, որի մէջ ձեր ոչխարների բուրդը կը գործուի և յոյս ունիմ, որ իմ բոլոր կալուածքների գիւղացիներն իրանց շորերը կ'ստանան հօտերի արտադրութիւնից:

Կարլի նախադիծը բոլորովին կատարուեցաւ: Բօզալխան ու Քրիստինէն սկսեցին աղջիկներին բուրդ մանել ու գործել սովորեցնել: Մահուտագործները, գլխարկ կարողներն ու դուլպայ գործողները գիւղի մէջ իրանց գործարանները շինեցին, ի հարկէ, երախտապարտ բարոնի օգնութեամբ:

Կամաց կամաց գիւղացիները սկսեցին իրանց սեպհական հօտերից ստանալ իրանց հագուստը:

Էմիլեան աղնագործութիւնը առաւ իւր առան-

ձին հովանաւորութեան տակ: Նորա փոքրիկ սեպհական հօտը նորան ամենալաւ բուրդ էր տալիս առատութեամբ: Կառավարիչ Վէստը յանկարծ մի անմոռանալի տաղանդ ցոյց տուեց, որ շատ օգտակար էր մատաղահաս բարոնուհուն. երբեմն ներկարարի մօտ ապրելով նա բուրդ ներկելը սովորել էր ամեն գոյնի և ամեն տեսակի: Էմիլեան ու Քրիստինէն ամեն տեսակ ձեռագործներ կարող էին անել, որոնց համար Կարլը սիրուն սիրուն նկարներ էր տալիս:

Շուտով ամրոցի ընդունարաններից մէկն ամբողջապէս զարդարուած էր նոցա արտադրուածներով: Որովհետև այդ աշխատութեանց վերայ գործ դրուած բոլոր բուրդը ընթերցողին ծանօթ փոքրիկ գառնից էր առաջ եկել, այդ պատճառաւ նոքա յիշատակի համար մի մեծ գորգ գործեցին միացած ուժերով տիկին Վալդէմը, Էմիլեան ու Քրիստինէն:

Դորա համար Կարլը մի լաւ մեծ գիւքով պատկեր հնարեց, որի վերայ նկարեց իւր համար այն անմոռանալի րոպէն, երբ նա գտաւ իւր մօրն ու քրոջը: Առաջին տեղում նա նկարեց բարոնուհուն և Րօզալիային կաղնիների շուքի տակ նստարանի վերայ, փոքր ինչ հեռու անտառի մէջ նկարեց իրան Էմիլեայի և Քրիստինէի մօտ, իսկ աղջիկների մէջ գառանը:

Այդ պատկերը մեծ հմտութեամբ էր նկարած. դէմքերի նմանութիւնը մեծ էր: Նա հրամայեց դնել այն շքեղ ոսկեզօծ շրջանակի մէջ և կախեց մեծ ընդունարանում: Պատկերի վերայ մեծ տառերով գրուած էր այս վերնագիրը.

„Փառք Աստուծոյ Նախախնամութեան“:

# ԼՈՒՍԱՏՏՆԻԿ

## ԳԼՈՒԽ I.

Մի ամառային երեկոյ աղքատ այրի Մարիամը նստած էր բաց պատուհանի մօտ: Նա մտածութեան մէջ ընկած նայում էր իւր խրճիթը շրջապատող այգուն, որի միջի խոտը հնձել էին ճաշից յետոյ և թարմ խոտի հոտը տարածուած էր օդի մէջ: Մութն ընկաւ և լուսինը դուրս եկաւ, որի ճառագայթները գետնի վերայ նկարում էին պատուհանի բոլորակ ապակիներն ու խաղողի տատանւող տերևները: Մարիամի տասն տարեկան միամօր որդին՝ Ֆերդինանդը կանգնած էր պատուհանի մօտ. դա մի շատ գեղեցիկ երեխայ էր, մազերը փայլուն և մետաքսի պէս, հագածը սպիտակ շապիկ ու կարմիր կծկալ:

Խեղճ կինը նստել էր որ հանգստանայ: Բայց որքան էլ ծանր լինէր աշխատութիւնն այն շոգ օրուան ընթացքում, այնին աւելի վշտից էր թուլանում քան յոգնածութիւնից: Նա հազիւ ձեռք տուեց իւր աղքատիկ ընթրիքին, որ բաղկացած էր հացից և կաթից: Մօրը նայելով Ֆերդինանդն էլ տխրեց, իսկ երբ տեսաւ, որ նա լաց եղաւ ձեռքի գդալը վայր թողեց ու կաթնի ամանը դրեց սեղանի վերայ:

Մարիամը նոր, գարնան էր այրիացել: Նորա ամուսինը՝ Ժակը պատուական մարդ էր և աշխատան-

քով էր ձեռք բերել նրանց տնակն ու այգին, որի մէջ շատ պատուական պտղաբեր ծառեր էր տնկել: Ի հարկէ դորա համար նա մի փոքրիկ պարտքի տակ ընկաւ, բայց նորա աշխատասիրութիւնը եղած տեղն այդ ոչինչ չէր նշանակել: Նա ամուսնացաւ մի խեղճ որբի հետ, որ սակայն շատ լաւ կրթուած էր և օրինակելի տան տիկին դարձաւ: Ամուսինները չափազանց սիրով էին ապրում, բայց տարաբաղդաբար ջերմախտ ընկաւ նոցա գիւղը և Ժակը նորա առաջին զոհը եղաւ: Մարիամը խնամելով իւր ամուսնուն ինքն էլ վարակուեցաւ, այնպէս որ երկար ժամանակ նորա առողջանալը կասկածելի էր:

Հանգուցեալի և իւր իսկ երկարատև հիւանդութիւնից նորա գործերը վատացան, կարողութիւնը բաւականին քչացաւ և այդ բաւական չէր՝ քիչ էր մնում, որ խրճիթն էլ ձեռքից գնար: Ժակը երկար ժամանակ բանել էր այն նահանգի ամենահարուստ գիւղացու մօտ, որին առհասարակ անուանում էին հաստ կալուածատէր:

Ժակը իւր ազնւութեամբ և աշխասիրութեամբ արժանացել էր այդ մարդու յարգանքին և դա կամենալով վարձատրել նորան այն տունն ու այգին գնելու համար վեց հարիւր ֆրանկ պարտք էր տուել նորան այն պայմանով, որ երախտապարտը տարին հարիւր ֆրանկ վճարէր նորան կամ աշխատութեամբ կամ փողով: Ժակը ճշդութեամբ վճարում էր պարտքը մինչև իւր օրհասական հիւանդութիւնը և միայն հարիւր ֆրանկ էր մնացել վճարելու՝ երբ նա մեռաւ: Մարիամը գիտէր այդ:

Բայց հաստ կալուածատէրն ինքն էլ մեռաւ վա-



րակիչ ախտից, իսկ նորա փեսան ու աղջիկը թղթերի մէջ գտան Ժակի ձեռք քաշած վեց հարիւր ֆրանկի պարտամուրհակը: Նոքա չը գիտէին պարտատիրոջ ու պարտականի մէջ եղած պայմանները և Մարիամից պահանջում էին բոլոր գումարը լրիւ: Խեղճ այրին Աստծուն վկայ էր կանչում, հաւատացնում էր, որ իւր հանգուցեալ ամուսինը մաս մաս վճարել էր պարտքը և թէ միայն հարիւր ֆրանկ էր մնացել: Բայց այդ ցուցումներն անօգուտ անցան: Երախտապարտ կալուածատէրը նորան խաբեբայ անուանեց և դատարանով պահանջեց պարտքը: Ոչ մի ապացոյց չ՚ունենալով հաստատելու, որ պարտքը մաս մաս վճարուած է խեղճ այրին մինչև անգամ մի վկայ էլ չը կարողացաւ ներկայացնել և նորան ստիպեցին բոլոր գումարը վճարել: Նա խեղճը ոչ մի միջոց չ՚ունէր և այդ պատճառաւ որոշել էին, որ նորա տունը ծախուի: Ի զուր էր նա ծունկ չոքում և աղաչում արտասուելով՝ որ ժամանակ տան իրան. Երախտապարտ կալուածատէրն անողոք էր և միւս օր տունը պէտք է ծախուէր: Այդ հանգամանքը միայն մի ժամ առաջ էր իմացել Մարիամը իւր մէկ հարևանից:

---

## ԳԼՈՒԽ Ը.

Մարիամն այդ լուրից շուարած նստեց պատուհանի մօտ: Նա երբեմն երկինքին էր նայում, որից օգնութիւն էր սպասում, երբեմն որդուն, որ էգուց պէտք է ման գար դռնէ դուռ ողորմութիւն հաւաքէր: Խրճիթի մէջ ծանր լռութիւն էր տիրում:

—Մեծ Աստուած, մտածեց նա. այսօր ես վերջին անգամն էի խոտ հաւաքում իմ պարտէզիկից: Ֆերդինանդիս ինձ համար քաղած դեղձերն այդ երեխայի վերջին պտուղները կը լինեն այն ծառերից, որոնց նորա հայրն այնքան աշխատութեամբ աճեցրեց և այնքան սիրով էր փայփայում: Գուցէ հէնց այսօր վերջին գիշերն է, որ մենք անց ենք կացնում մեր յարկի տակ: Եգուց այս բոլորը մէկ ուրիշին կը պատկանի: Ով գիտէ արդեօք իսկոյնեւեթ մեզ տանից դուրս չէ՞ն անել և միայն Աստուած է յայտնի՝ արդեօք մեզ համար մենք օթևան կը գտնենք եգուց:

Այդ մտքի վերայ նա լաց եղաւ: Ֆերդինանդը, որ մինչև այդ ժամանակ գրեթէ անշարժ կանգնած էր, մօտեցաւ մօրը և արտասուքը կուլ տալով ասաց.

—Մի՛ լար, մայրիկ: Մի՞թէ չես յիշում հայրիկին ինչ ասաց այս անկողնու մէջ մեռնելիս. „Լաց մի՛ լինիք. Աստուած այրիների և որբերի օգնականն ու խնամակալն է. խնդրեցէք նորան և նա կը հոգայ ձեզ համար“: Այնպէս չէ՞, մայրիկ, նա ասաց այդ խօսքերը:

—Այո, սիրելի որդիս, այդ ճշմարիտ է, պատասխանեց մայրը:

—Ուրեմն էլ ինչո՞ւ ես լաց լինում, կրկնեց երեխան: Աղօթի՛ր Աստծուն՝ և նա քեզ կ՚օգնէ: Ես յիշում եմ երբ որ երբեմն հօրս հետ գնում էի անտառ փայտ բերելու՝ եթէ ծարաւում էի կամ ոտս փուշ էր մտնում, ես լաց չէի լինում, այլ միայն դիմում էի հօրս և նա թողնում էր կացինն ու ինձ ջուր էր տալիս կամ փուշը հանում էր ոտիցս: Ուրեմն դու էլ



պէտք է դիմես Աստծուն: Դէ՛հ, սկսի՛ր, ես էլ քեզ հետ կ՚աղօթեմ:

—Դու ճշմարիտ ես ասում, որդիս, պատասխանեց մայրը, Ֆերդինանդին գրկելով. մեզ մնում է միմիայն Աստուծոյ վերայ դնել մեր յոյսը:

Նա ձեռքերը խաչեց և սկսեց աղօթք անել իւր որդու հետ: Ամբողջ լուսինը լուսաւորում էր այս սրտաշարժ տեսարանը:

Նոցա աղօթքը կարճ բայց ջերմ էր: Խեղճ այրին մի քիչ թեթևութիւն զգաց:

Յանկարծ Ֆերդինանդն աշխուժով վեր թռաւ տեղից և բացականչեց.

—Մայրիկ, մայրիկ, տես այս ինչ բան է: Ահա այս թռչող կայծը կարծես վայր ընկնող աստղիկ լինի: Տես ահա լոյս է տալիս պատուհանի մօտ: Էհե՛. նա ներս թռաւ սենեակ.... Ահա նա բարձրացաւ դէպի առաստաղը: Վա՛հ, ինչ սիրուն բան:

—Այդ մի լուսատու որդ է, ասաց մայրը. ցերեկը նա հազիւ նկատելի մի միջատ է, բայց մթնում ճրագի պէս փայլում է:

—Կարելի՞ է նորան բռնել, մայրիկ, նա հօ չի՞ կծիլ, հօ չի՞ այրիլ իմ ձեռքը:

—Մի՛ վախենար, սիրելիս, նա այրող չէ, ասաց այրին ժպտալով. աշխատի՛ր, բռնի՛ր նորան և մօտից զննի՛ր. դու Աստծու մի նոր հրաշքը կը տեսնես:

Այդ րոպէին երեխան բոլոր ցաւերը մոռացաւ, նա միայն այն էր մտածում թէ ինչպէս բռնի փայլուն միջատին, որ երբեմն սեղանի, երբեմն աթոռների տակ էր թռչում: Եւ հէնց այն րոպէին երբ Ֆերդինանդը ձեռք մեկնել էր բոլորովին փտահ, որ նո-

բան կը բանի՝ որդը թաք կացաւ պատին կից դրուած պահարանի ետև: Երեխան պառկեց գետնին և սկսեց նայել պահարանի տակով:

—Ա՛խ, մայրիկ, ես նորան շատ պարզ տեսնում եմ, ասաց նա: Որդիկը պատի մօտ է և իւր թաք կացած տեղն ամբողջապէս լուսաւորում է: Բայց ես չեմ կարող նորան բռնել, որովհետև իմ ձեռքերս այնքան երկար չեն:

—Փոքր ինչ սպասիր, նա շուտով այնտեղից դուրս կը թռչի:

Ֆերդինանդը փոքր ինչ սպասեց, յետոյ մօտեցաւ մօրը և աղաչելով ասաց.

—Սիրելի մայրիկ, քո ձեռքերդ երկար են, խընդրում եմ, կամ բռնիր որդին ինձ տուր կամ պահարանը քիչ յետ քաշիր, յետոյ ես ինքս էլ կը բռնեմ:

Այրին կատարեց որդու ցանկութիւնը, պահարանը յետ քաշեց և երեխան բռնեց միջատին: Նորան զննելով, նա բոլորովին բաղդաւոր էր:

---

## ԳԼՈՒԽ III.

Բայց մօր ուշադրութիւնը գրաւեց մի ուրիշ առարկայ: Երբ որ նա պահարանը պատից յետ քաշեց՝ նկատեց, որ մի բան ընկաւ գետին: Այն բանը ձեռքն առաւ ու աղաղակեց.

—Աստուած իմ, մենք ազատուեցանք. անցեալ տարուայ օրացոյցն է *) այս, որին ես այնքան ժամանակ ի զուր որոնում էի: Ես կարծում էի թէ իմ տկարութեանս ժամանակ նորան մէկը ոչնչացրած կը լինի իբրև մի անօգուտ բան: Այժմ ես կարող եմ ապացուցանել, որ իմ ամուսինը գրեթէ բոլոր պարտքը վճարել է: Ով կը մտածէր թէ այս օրացոյցը պատուհանի ետևն է:



Նա շտապով մօմ վառեց. և ուրախութեան արտասուքն աչքերին սկսեց թերթել օրացոյցը, որի մէջ Ժակը սովորաբար գրում էր իւր հաշիւները: Վերջապէս նա գտաւ այն թերթը, որի վերայ հատ կալուածատիրոջ ձեռքով գրուած էր.

„Սուրբ Մարտինի տօնի օրը ես հաշիւս տեսայ Ժակ Բլոմի հետ, և վաւերացնում եմ, որ նա ինձ պարտ մնաց միայն հարիւր փրանկ“:

Մարիամը հիացած գրկեց իւր որդուն և աղաղակեց.

—Ոհ, սիրելի Ֆերդինանդ, գոհանանք Աստծուց: Եգուց մենք ստիպուած չենք լինել այստեղից դուրս գալ և կը մնանք մեր տանը:

—Այդ ես արեցի չէ՞, մայրիկ, ասաց Ֆերդինանդը. եթէ ես քեզ չը խնդրէի պահարանը յետ քաշել, մենք գիրքը չէինք գտնել: Նա կարող էր այնտեղ մնալ մինչև հարիւր տարի:

Քիչ լուռ կենալուց յետոյ, Մարիամն ասաց.

—Ո՛հ, ոչ, որդեակս, այդ բոլորն Աստուած էր

---

*) Առ հասարակ Գերմանիայում բոլոր գիւղացիները գըրագէտ են և չը կայ մի խրճիթ, որ գիւղական օրացոյց չ'ունենայ, օրացոյցի էջերի մէջ էլ կան մի քանի սպիտակ թերթեր, որոնց վերայ համապատասխան ամսաթուի տակ նշանակվում են ինչպէս ծախսածն ու գնածը նոյնպէս և բոլոր դրամական հաշիւները և բացի դորանից ընտանիքի անդամների ծնունդը, հարսանիքը կամ մահը:

այդպէս կարգադրել: Յիշիր, որ Նա միշտ այրիների և որբերի օգնականն ու պաշտպանն է:

Մարիամը չը կարողացաւ ամբողջ գիշեր աչքը խփել, այնքան մեծ էր նորա ուրախութիւնը: Առաւօտը շուտով նա գնաց դատաւորի մօտ: Վերջինը կանչեց այնտեղ երիտասարդ կալուածատիրոջը, որ իւր հանգուցեալ աներոջ ձեռքը ճանաչելով սաստիկ շփոթուեցաւ, որ վիրաւորել էր այրուն, նորան խաբեբայ անուանելով: Դատաւորը յայտնեց նորան՝ որ անիրաւացի վիրաւորանքն անպատճառ բաւարարութիւն է պահանջում: Կալուածատէրը համաձայնեցաւ:

Իսկ երբ որ այրին պատմեց օրացոյցը գտնելու բոլոր հանգամանքները, լուսատեսիլ անակնկալ երևիլը, դատաւորը բացականչեց.

— Այստեղ անկասկած երևում է Աստուծոյ մատը:

Կալուածատէրը չը կարողացաւ արտասուքը պահել.

—Այո, ասաց նա. Աստուած այրիների և որբերի պաշտպանն է... Բայց Նա և նոցա վրէժխնդիրն էլ է: Ներեցէք ինձ, Մարիամ, որ ես ձեզ հետ այնքան անարդարութեամբ վարուեցայ, հաւատացնում եմ ձեզ, որ այդ սխալուելուց առաջ եկաւ: Իմ ձեզ պատճառած վիրաւորանքն էլ քաւելու համար ես թողնում եմ ձեզ ձեր մնացած պարտքը, էլ չը պէտք է վճարէք և ամեն անգամ, երբ դուք կարիք կ'ունենաք խնդրում եմ եկէք ինձ մօտ, ես միշտ պատրաստ եմ ձեզ օգնելու: Եթէ Աստուած մի արասցէ, մի օր ես էլ աղքատութեան մէջ ընկնեմ, կամ իմ կինս էլ այրի մնայ և որդիքս որբ՝ Աստուած նոցա էլ այնպէս պաշտպանի, ինչպէս ձեզ օգնեց կեանքի ծանր րոպէներում:

523
524
525

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0004756

ՀՀ Ազգային գրադարան
NL0004755

ՀՀ Ազգային գրադարան
NL0004754